Փոխըմբռնման համաձայնագիր

«Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն» ծրագրի համար

Սույն Փոխըմբռնման համաձայնագիրը (այսուհետ՝ կից հավելվածի հետ միասին՝ "ՓՀ") կազմել և համաձայնության են եկել հետևյալ կողմերը

ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտը՝ (այսուհետ՝ **International IDEA**), որի գլխամասային գրասենյակը գտնվում է

Հասցե: Ստոկհոլմ, SE - 103 34 Ստոկհոլմ, Շվեդիա
Հեռախոս: +46 8 698 37 00
Ֆաքս: +46 8 20 24 22

իսկ Հայաստանյան մասնաճյուղը՝

Հասցե: Բաղրամյանի պող. 18-2, Երևան 0019, ՀՀ
Հեռախոս: +374 10 58 14 89
Ֆաքս: +374 10 58 16 04
էլ փոստ: idea@arminco.com

ի դեմս Լիազոր ներկայացուցիչ և հայաստանյան գրասենյակի ղեկավար Արմինե Առաքելեանի մի կողմից,

և **ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը** (այսուհետ՝ ԿԸՀ), որի գրասենյակը գտնվում է

Հասցե: Գևորգ Քոչարի փող. 21ա, Երևան 0009
Երկիր: Հայաստանի Հանրապետություն
Հեռախոս: + 374 10 54 35 03
Ֆաքս: + 374 10 54 35 23
էլ. փոստ: cec@intergalaxy.am

ի դեմս ԿՀԸ նախագահ Գարեգին Ազարյանի մյուս կողմից, **հետևյալի մասին**

1. International IDEA-ն ՀՀ ԿԸՀ-ի հետ համագործակցությամբ, իրականացնում է «Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որը հիմնված է BRIDGE[1]-ի մեթոդաբանության և ներուժի զարգացման մոտեցման վրա: Ծրագրի տևողությունն է 2006թ հունվարից մինչև 2008թ հունվարը:

2. Ծրագրի նպատակներն են
   - Հայաստանում ընտրական վարչակազմի մասնագիտական և էթիկական հմտությունների զարգացում
   - Հայաստանում ընտրական կրթության կայուն համակարգի զարգացում
   - Հայաստանում ընտրական գործընթացներին հասարակության մասնակցության զարգացում՝ ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան:

3. Որպես ծրագրի արդյունք
   (1) Հայաստանում կստեղծվի ընտրական բարեփոխումների ուղղությամբ աշխատող մասնագետների խումբ
   (2) Դասընթացի միջոցով կպատրաստվեն ընտրական վարչակազմի ուսուցանողներ
   (3) Կմշակվի ընտրական վարչակազմի զարգացման ռազմավարություն,
   (4) Կմշակվի Հայաստանի ընտրական վարչակազմի հմտությունների զարգացման BRIDGE դասագիրք
   (5) Կամրապնդվի Հայաստանի ընտրական վարչակազմի մասնագիտական հմտությունները՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման բնագավառում
   (6) Կմշակվի և հայաստանյան կրթական հաստատություններին կներկայացվի ընտրական կրթական ծրագիր
   (7) Կպատրաստվեն լրատվական ծրագրեր
   (8) Կիրականացվեն հանրային երկխոսություններ և քննարկումներ ընտրական գործընթացների և հասարակության մասնակցության վերաբերյալ:

4. Ծրագրի շրջանակում կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

---

[1] Ի պատասխան աշխարհի տարբեր պետությունների ընտրական վարչակազմի ձևակերպված պահանջի՝ International IDEA-ն, Ավստրալիայի ընտրական հանձնաժողովը և ՄԱԿ-ի ընտրությունների աջակցության բաժինը 1999թ-ին մշակեցին համընդհանուր ուսուցողական-կրթական ծրագիր ընտրական վարչակազմի համար, որը կոչվեց BRIDGE (ժողովրդավարության, կառավարման և ընտրական ռեսուրսների զարգացում – Building resources in democracy, governance and elections) կրթական ծրագիր:

IDEA Գլխամասային գրասենյակը Շվեդիայում. Ստրոմսբորգ, SE-10334 Ստոկհոլմ, Շվեդիա. Հեռ՝ 46 8 698 37 00, Ֆաքս՝ 46 8 20 24 22, էլ. փոստ՝ info@idea.int, ինտերնետային կայք՝ www.idea.int

IDEA Գրասենյակը Հայաստանում. Բաղրամյան պողոտա 18-2, Երևան 0019, Հայաստան. Հեռ՝ 374 10 58 14 89, Ֆաքս՝ 58 16 04, էլ. փոստ՝ a.arakelian@idea.int; idea@arminco.com, ինտերնետային կայք՝ www.idea.int/southcaucasus

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով. Գևորգ Քոչարի փողոց 21ա, Երևան 0009, Հեռ՝ 374 10 54 35 03, Ֆաքս՝ 374 10 54 35 23, էլ. փոստ՝ cec@intergalaxy.am, ինտերնետային կայք՝ www.elections.am

(1) Հայաստանում BRIDGE-ի ազգային կորիզ խմբի ստեղծում, որը կառաջարկի ընտրական վարչակազմի զարգացման ռազմավարություն, կպատրաստի նյութեր, կանցկացնի ուսուցումներ
(2) Ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացման ռազմավարության մշակում և հաստատում *-ապրիլ-մայիս 2006թ*
(3) Ընտրական վարչակազմի ուսուցման համար նյութերի մշակում և հրատարակում, որը կլինի BRIDGE-ի նյութերի տեղայնացված տարբերակը (500-550 էջ) – *ապրիլ-դեկտեմբեր 2006թ*
(4) Ուսուցողական դասընթացի նախապատրաստում և անցկացում, և մինչև 25 BRIDGE ուսուցանողների ուսուցում և որակավորում - *հոկտեմբեր 2006-փետրվար 2007*
(5) BRIDGE-ի նյութերի վրա հիմնված ընտրական կրթության ծրագրի մշակում (50-70 էջ) և հրատարակում – *հունիս 2006-մարտ 2007*
(6) Ուսուցանողների կողմից ընտրական կրթության երկու դասընթացների անցկացում և դրանց ներկայացում հայաստանյան կրթական հաստատություններին - *ապրիլ-սեպտեմբեր 2007*
(7) 5 հանրային քննարկումներ ու բանավեճերի անցկացում Երևանում և 4 մարզերում, 4 հեռուստա, 5 ռադիո հաղորդումների և 10 հոդվածների /հարցազրույցների/ հայտարարությունների տպագրում մամուլում ընտրական և ժողովրդավարական գործընթացներին հասարակության մասնակցությունը խրախուսելու համար – *սեպտեմբեր 2006-դեկտեմբեր 2007*

Այսպիսով, Կողմերը համաձայնության եկան սույնի վերաբերյալ

Հոդված 1. Նպատակը

(1) Համագործակցել «Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն» ծրագրի շրջանակում, որը մանրամասն նկարագրված է Հավելված Ա-ում:

Հոդված 2. ՓՀ ժամկետը

(1) Սույն ՓՀ-ն ուժի մեջ է 2006թ մարտի 1-ից և գործում է մինչև 2008թ. հունվարի 31-ը:

(2) Ծրագրի իրականացման համար որևէ ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտության պարագայում այս ՓՀ կարող է գործել միայն այդպիսի ֆինանսավորման առկայության դեպքում:

Հոդված 3. ՓՀ-ում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը

(1) Յուրաքանչյուր կողմ գրավոր կերպով ողջամիտ ժամկետում պետք է տեղեկացնի մյուս կողմին այն իրավիճակի կամ երևույթի մասին, որը կարող է ՓՀ-ի վերանայման անհրաժեշտություն առաջացնել նշված գործողությունների շրջանակի, բնույթի, տևողության կամ առհասարակ ՓՀ որևէ կետի մասին:

(2) ՓՀ-ում՝ ներառյալ հավելվածում, փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ սույն ՓՀ-ի գործողության ժամկետի շրջանակներում:

Հոդված 4. Լիազորված ներկայացուցիչները

(1) Սույն ՓՀ-ում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու համար Կողմերի լիազոր ներկայացուցիչներն են սույն ՓՀ-ի առաջին էջում նշված ստորագրող Կողմերը՝ ի պաշտոնե կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչները:

(2) ՓՀ-ի իրականացման հետ կապված հարցերով լիազոր ներկայացուցիչներն են սույն ՓՀ-ի առաջին էջում նշված ստորագրող Կողմերը ի պաշտոնե կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչները:

Հոդված 5. ՓՀ-ով ԿԸՀ-ին վերապահված պարտականությունները

(1) ՀՀ ԿԸՀ սույն ՓՀ-ով պարտավորվում է կատարել հետևյալը՝

(i) համագործակցել International IDEA-ի հետ ՀՀ ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացման ծրագրի ռազմավարության և պլանավորման մշակման և իրականացման ընթացքում,

(ii) նշանակել BRIDGE Հայաստանյան կորիզ խմբի մեկ անդամի, որը հանդես կգա որպես ԿԸՀ-ի ներկայացուցիչ, կմասնակցի կորիզ խմբի աշխատանքներին և որոշումների կայացմանը, ինչպես նաև կապահովի կապը կորիզ խմբի և ԿԸՀ-ի միջև,

(iii) առաջարկել BRIDGE Հայաստանյան կորիզ խմբի մեկ անդամ որպես այն կրթական հաստատության ներկայացուցիչ, որը համագործակցում է ԿԸՀ-ի հետ ընտրական հանձնաժողովների անդամների համար դասընթացների կազմակերպման գործում, տվյալ հաստատության հետ խորհրդակցությամբ, /եթե այդպիսիք կան/

(iv) սույն ծրագրի շրջանակներում մասնակցել հանրային քննարկումներին, լրատվամիջոցների հետ կազմակերպված ծրագրերին և հանրային միջոցառումներին

(v) International IDEA-ի հետ համատեղ կազմակերպել ընտրական հանձնաժողովների անդամների կրթության համար ուսուցանողների ընտրությունը և դասընթացների կազմակերպումը

(vi) համաձայնության գալ որակավորված ուսուցանողների հետ որպեսզի վերջիններս ի պաշտոնե ծառայեն Հայաստանին որպես ընտրական կրթողներ:

Հոդված 6. International IDEA –ին վերապահված պարտականությունները

(1) International IDEA-ն սույն ՓՀ-ով պարտավորվում է կատարել հետևյալը

(i) ստեղծել տեղական ծրագրային թիմ և BRIDGE–ի Հայաստանյան կորիզ խումբ
(ii) ապահովել ծրագրի ընդհանուր իրականացումը
(iii) ապահովել անհրաժեշտ խորհրդատվություն և մասնակցություն BRIDGE միջազգային փորձագետների կողմից
(iv) համագործակցել ՀՀ ԿԸՀ-ի ՀՀ ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացման ծրագրի ռազմավարության և պլանավորման մշակման և իրականացման ընթացքում,
(v) տրամադրել խորհրդատվություն ԿԸՀ-ին և ԿԸՀ-ի հետ համագործակցող կրթական հաստատությանը
(vi) սույն ծրագրի շրջանակներում կազմակերպել և մասնակցել հանրային քննարկումներին, լրատվամիջոցների հետ կազմակերպված ծրագրերին և հանրային միջոցառումներին
(vii) ԿԸՀ-ի հետ համատեղ կազմակերպել ընտրական հանձնաժողովների անդամների կրթության համար ուսուցանողների ընտրությունը և դասընթացները:

Հոդված 7. Գաղտնիության ապահովումը

(1) Գաղտնի Տեղեկատվության Պահպանում. Սույն ՓՀ-ով ամրագրված ծրագիրն իրականացնելու ժամանակահատվածում կողմերը պարտավորվում են չօգտագործել գաղտնի տեղեկատվությունը որևէ այլ դեպքում քան նշված է սույն ՓՀ-ով, և չտրամադրել տվյալ տեղեկատվությունը որևէ երրորդ կողմի առանց մյուս Կողմի նախօրոք գրավոր համաձայնության:

(2) Գաղտնի տեղեկատվության սահմանումը: Գաղտնի տեղեկատվությունն այն տեղեկատվությունն է, որը վերաբերում է Կողմերից յուրաքանչյուրի մտավոր սեփականությանը, սեփականության տվյալներին, բիզնես/աշխատանքային պլանին, կանխատեսումներին կամ գործունեությանը, ֆինանսական և հաշվապահական տվյալներին, դեռ զարգացման փուլում գտնվող նյութերին կամ ծառայություններին, համակարգչային ծրագրերին, փաստաթղթերին կամ ծրագրային նյութերին, վերլուծական մեթոդներին կամ գործընթացներին, կամ պարունակում է Կողմերի պատրաստած այլ նյութ կամ տեղեկատվություն սույն ՓՀ-ի շրջանակներում կամ սրանից դուրս:

Հոդված 8. Ֆինանսական դրույթներ

(1) International IDEA-ն ստանձնում է Ծրագրի իրականացման ֆինանսավորումը

(2) Եթե ծրագրի իրականացման համար անհրաժեշտ պայման լինի դրամական փոխանցումը, ապա այն կկարգավորվի առանձին ՓՀ-ով:

Հոդված 9. Հեղինակային իրավունքը

(1) Սույն ՓՀ-ի շրջանակներում իրականացված ծրագրի ընթացքում ստեղծված ցանկացած նյութի կամ աշխատանքի (տպագրված, էլեկտրոնային տարբերակով, մագնիսական կրիչներով կամ այլ վիճակում) նկատմամբ հեղինակային իրավունքը Կողմերին պատկանում է համատեղ:

(2) Կողմերից որևէ մեկը չի կարող վաճառել, կամ այլ եղանակներով փոխանցել վերջնական նյութին պատկանող իր հեղինակային իրավունքը սույն ՓՀ-ի կողմ չհանդիսացող երրորդ կողմի առանց մյուս կողմի գրավոր տեղեկացման և համաձայնության:

(3) Կողմերից յուրաքանչյուրն առանց մյուս կողմի համաձայնության կարող է պատրաստել, հրատարակել և բաժանել նյութերը ցանկացած հրապարակման ֆորմատով ներառյալ ինտերնետ և այլ էլեկտրոնային տարբերակ

(4) Յուրաքանչյուր կողմ կերաշխավորի և կապահովի, վերջնական հրատարակությունների մեջ օգտագործվելիք իր տրամադրած նյութերն իր սեփականությունն են կամ ունի համապատասխան արտոնագիր հեղինակային իրավունքի իրավատիրոջից այդ նյութերը հրատարակելու, բաժանելու կամ այլ ձևերով օգտագործելու համար՝ որպես իր սեփականություն:

(5) Յուրաքանչյուր կողմ պետք է նյութերը պահպանի անվտանգ և ապահովի այնպիսի գործողություններից, որոնք կարող են առաջացնել սույն ՓՀ-ի կողմ չհանդիսացող կողմից հեղինակային իրավունքի խախտում, ինչպես նկարագրված է կետ 4-ում:

(6) Յուրաքանչյուր կողմ կարող է պատրաստել, հրատարակել կամ բաժանել նյութեր այլ լեզուներով՝ մյուսը կողմին գրավոր տեղեկացնելուց հետո:

(7) Նյութերի բոլոր հրատարակումներում պիտի արտացոլվեն կողմերի տվյալները, հեղինակների և խմբագիրների անունները:

(8) Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի սույն հեղինակային իրավունքի պաշտպանությունը:

Հոդված 10. Վաղաժամկետ դադարեցումը

(1) Սույն ՓՀ-ն կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ ստորև նշված իրավիճակներից որևէ մեկի առկայության դեպքում

(i) եթե Կողմերը կամ Կողմերից մեկը կարծում է, որ տվյալ պահին առկա իրավիճակի պայմաններում սույն ՓՀ-ում նկարագրված նպատակներին անհնար է հասնել ամբողջությամբ կամ մասամբ

(ii) եթե տվյալ ծրագրի համար տրամադրված ֆինանսավորումը դադարեցվի:

(2) Դադարեցման մասին որոշումը պետք է ստորագրվի երկու կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, և չպետք է կասկածի ենթարկի սույն ՓՀ-ում նշված կողմերի այլ իրավունքները:

Հոդված 11. Հավելվածներ

Հավելվածը դիտվում է որպես սույն համաձայնագրի բաղկացուցիչ մաս

1. Հավելված Ա: քաղվածք «Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն» ծրագրից

Ի հաստատումն վերը նշվածի՝ Կողմերը ստորագրում են սույն համաձայնագիրը անգլերեն և հայերեն լեզուներով, երկու օրինակ, որից մեկական օրինակ պահպանվում է կողմերից յուրաքանչյուրի մոտ:

ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԱԶՄՎԵԼ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

2006 թ Մայիսի 16 ին

International IDEA-ի կողմից՝

Անուն: **Արմինե Առաքելեան**

Պաշտոնը: **Լիազոր ներկայացուցիչ և հայաստանյան գրասենյակի ղեկավար**

Ստորագրություն:

ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԱԶՄՎԵԼ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

2006 թ Մայիսի 16 ին

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից՝

Անուն: **Գարեգին Ազարյան**

Պաշտոնը: **ԿԸՀ Նախագահ**

Ստորագրություն:

IDEA Գլխամասային գրասենյակը Շվեդիայում. Ստոկհոլմ, SE-10334 Ստոկհոլմ, Շվեդիա. Հեռ՝ 46 8 698 37 00, Ֆաքս՝ 46 8 20 24 22, էլ. փոստ՝ info@idea.int, ինտերնետային կայք՝ www.idea.int

IDEA Գրասենյակը Հայաստանում. Բաղրամյան պողոտա 18-2, Երևան 0019, Հայաստան. Հեռ՝ 374 10 58 14 89, Ֆաքս՝ 58 16 04, էլ. փոստ՝ a.arakelian@idea.int; idea@arminco.com, ինտերնետային կայք՝ www.idea.int/southcaucasus

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով. Գևորգ Քոչարի փողոց 21ա, Երևան 0009, Հեռ՝ 374 10 54 35 03, Ֆաքս՝ 374 10 54 35 23, էլ. փոստ՝ cec@intergalaxy.am, ինտերնետային կայք՝ www.elections.am

Հավելված Ա
թարգմանված է անգլերենից
իրավական ուժ ունի անգլերեն օրիգինալ տարբերակը

Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտ՝ ԺԸԱՄԻ (International IDEA)
Հարավային Կովկասի ծրագիր

ԾՐԱԳԻՐ

Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն

(քաղվածք)

Իրականացման ժամկետը՝ հունվար 2006 - հունվար 2008

10 նոյեմբեր 2005-ին

1. Ներածություն

Այս փաստաթուղթը նկարագրում է ժողովրդավարության և ընտրությունների աջակցման միջազգային ինստիտուտի (International IDEA) «BRIDGE Հարավային Կովկաս՝ ընտրական հանձնաժողովների հմտությունների կատարելագործման և ինստիտուցիոնալ ամրապնդման ծրագրի» երրորդ փուլը: International IDEA-ի Հարավային Կովկասի ծրագիրը նախաձեռնել է այս ծրագիրը 2003 թ-ին, և 2004-2005 թթ. իրականացրել այն Նիդեռլանդների կառավարության աջակցությամբ և լրացուցիչ ֆինանսավորմամբ՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում իր դեսպանության միջոցով:

Ծրագրի այս երրորդ փուլը մշակվել է աջակցելու համար Հայաստանում կայուն ժողովրդավարության զարգացմանը ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործման և քաղաքական մասնակցության միջոցով: Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- Հայաստանում ընտրական վարչակազմի մասնագիտական և էթիկական հմտությունների զարգացում;
- Հայաստանում ընտրական կրթության կայուն համակարգի զարգացում;
- Հայաստանում ընտրական գործընթացներին հասարակության մասնակցության զարգացում՝ ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան:

Ծրագրի իրականացման ժամկետը 25 ամիս է, 2006թ. հունվարից մինչև 2008թ. հունվարը, և ընդհանուր բյուջեն կազմում է 385.414 եվրո:

Ծրագիրը կառուցված է ինչպես IDEA-ի ընտրությունների և քաղաքական բարեփոխումների բնագավառներում ունեցած համաշխարհային փորձի, այնպես էլ IDEA-ի Հարավային Կովկասի ծրագրի տարածաշրջանային և Վրաստանում ազգային մակարդակներում ձեռք բերած փորձի վրա: Կարծում ենք, որ այս նախաձեռնությունը Հայաստանի համար կարևոր հնարավորություն կստեղծի զարգացնելու ընտրությունների բնագավառում մասնագիտական հմտությունները, ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքական մշակույթը՝ աջակցելով ժողովրդավարության կայացմանը 2007 և 2008թթ. խորհրդարանական և նախագահական ընտրություններին ընդառաջ:

2. Ընդհանուր տեղեկություն

Հայաստանում անկախ պետականության զարգացման վերջին 14 տարիների ընթացքում ընտրությունները և քաղաքական մասնակցությունը եղել են պետության ժողովրդավարական զարգացման ամենահիմնական խնդիրներից մեկը: Այդ ժամանակահատվածում պետության հիմնական կառույցները, ինչպես նաև ընտրական աջակցություն ցուցաբերող կառույցները հետզհետե սկսեցին հասկանալ, որ կայուն ընտրական վարչարարությանը հասնելու համար առաջնություն պետք է տրվի ինստիտուցիոնալ կառուցմանը և մասնագիտական զարգացմանը: Միաժամանակ, պետությունում կայուն ժողովրդավարական ընտրական գործընթացներին հասնելու համար կարևոր է, որ ապահովվի կայուն ընտրական կրթություն, իսկ ժողովուրդը հնարավորություն ունենա մասնակցելու հանրային քննարկումներին և հանրային օրակարգ ձևակերպելու գործընթացին:

Վերջին 15 տարիների ընթացքում մի շարք զարգացող պետություններում ձևակերպվեց ընտրություններում ռեսուրսների զարգացման կարիքը: Ի պատասխան այդ կարիքի International IDEA-ն, Ավստրալիայի ընտրական հանձնաժողովը և Միավորված Ազգերի կազմակերպության ընտրությունների աջակցության բաժինը 1999-ին մշակեցին համապարփակ ուսումնական-կրթական ծրագիր ընտրական վարչակազմի համար՝ «BRIDGE Ընտրական վարչակազմի ուսումնական-կրթական ծրագիր» անունով: Այս ծրագիրն ընդգրում է ընտրությունների բոլոր բնագավառները և օգտագործում է գործնական վարժությունների վրա հիմնված ուսուցման մեթոդաբանություն՝ հմտությունները և արհեստավարժությունը զարգացնելու համար: Այս ուսուցում-կրթությունը համապարփակ է և օգտագործում է համեմատական օրինակներ՝ ցուցադրելու համար հնարավոր տարբերակները և լավագույն փորձերը: Դասընթացի վարժությունների հիմքում ընկած են ընտրական վարչակազմի համար ուղենիշ հանդիսացող սկզբունքները, ինչպիսիք են անկողմնակալությունը, ճշգրտությունը և թափանցիկությունը:

Հարավկովկասյան տարածաշրջանի ընտրական վարչարարության ազգային և տարածաշրջանային գնահատման հիման վրա International IDEA-ն 2003 թ-ին նախաձեռնել է «BRIDGE (ժողովրդավարության, կառավարման և ընտրական ռեսուրսների զարգացում – Building resources in democracy, governance and elections) Հարավային Կովկաս» ծրագիրը՝ օգտագործելով և տարածաշրջանի կարիքներին հարմարեցնելով BRIDGE ծրագրի սկզբնական տարբերակը: «BRIDGE Հարավային Կովկաս. ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացում» ծրագիրն իրականացվել է ինչպես տարածաշրջանային այնպես էլ ազգային-ներպետական մակարդակում: Սրա արդյունքում 2004թ-ին ստեղծվեց BRIDGE ուսուցանողների ցանց, և կազմակերպվեց ուսուցանողների ուսուցում Հարավային Կովկասում, բացի դրանից մի շարք ուսուցանողներ պատրաստվեցին նախկին Խորհրդային Միության այլ պետություններից: Ծրագրի այս փուլի արդյունքներն էին հարավկովկասյան տարածաշրջանում ուժեղ թիմի և ուսուցանողների ցանցի ստեղծումը, և տարածաշրջանի կարիքներին համապատասխանեցված դասագրքի պատրաստումը ռուսերեն լեզվով:

2005թ-ի ընթացքում IDEA-ն աշխատել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հետ՝ ուշադրությունը սևեռելով ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացմանը և ինստիտուցիոնալ ամրապնդմանը՝ 2004թ-ին ձևավորված կորիզ խմբի հետ համագործակցությամբ: Այս ազգային նախաձեռնությամբ BRIDGE ուսուցանողների ավելի մեծ խումբ ստեղծվեց Վրաստանում, մշակվեց ռազմավարական ծրագիր, մշակվեց ու հրապարակվեց ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացման ուսումնական ծրագիր վրացերեն լեզվով:

BRIDGE-ի մոտեցումը, մեթոդաբանությունը և նյութերը այժմ օգտագործվում են ընտրական կրթության դասընթացների ժամանակ աշխարհի մի շարք պետություններում, ինչպիսիք են օրինակ Ավստրալիան և Հարավային Աֆրիկան, ինչը կարևոր է ակտիվ քաղաքացիության խրախուսման համար: Այս դասընթացները ներառում են դպրոցական և համալսարանական դասընթացներ, և հեռանկարում կարող են վերածվել Ընտրական ակադեմիայի կամ դպրոցի: Այս մոտեցումը կարող է արդիական լինել նաև Հայաստանի համար:

Հայաստանում վերջերս փոփոխվել է Ընտրական օրենսգիրքը (մայիս 2005թ.) և այժմ իրականացվում են ընտրական բարեփոխումներ: Հայաստանում խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն 2007թ-ին, իսկ նախագահական ընտրությունները՝

2008թ-ին: 2006թ-ի հունվարին նախաձեռնելով ծրագրի այս փուլը, International IDEA-ն կհամագործակցի Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հետ՝ ամրապնդելու համար ընտրական հանձնաժողովների պրոֆեսիոնալիզմը, որպես ազգային մարմին և աջակցելու համար ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացմանը: IDEA-ն կաշխատի ընտրական կրթության ուղղությամբ և կգորացնի մարդկանց՝ մասնակցելու հանրային քննարկումներին և երկխոսության միջոցով հանրային օրակարգի կազմման գործընթացներին՝ 2007 և 2008 թթ. ընտրությունների համատեքստում:

3. Իրավիճակի վերլուծություն

Հայաստանում ժողովրդավարացման օրակարգը ներառում է ժողովրդավարական պետականության կառուցումը, ընտրական բարեփոխումները, քաղաքացիների արդյունավետ գիտակից մասնակցությունը ժողովրդավարական բարեփոխումների գործընթացներին և հանրային քաղաքականության ձևավորումը, որոնք դիտվում են ինչպես ազգային ներպետական մարդկային զարգացման, այնպես էլ Եվրոպական ինտեգրման տեսանկյուններից:

Այս համատեքստում ունակ և պրոֆեսիոնալ ընտրական վարչակազմը կարևոր է ընտրությունների կազմակերպման համար: Առանց արհեստավարժության մշակույթի առկայության 2007 և 2008 թթ. ապագա ընտրական գործընթացների հավաստիությունը, ինչը ժողովրդավարական ցանկացած զարգացման կարևորագույն մասնիկն է, կարող է կասկածի տակ դրվել: Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն ուսումնասիրել ընտրություններն առավել լայն համատեքստում ինչպես համեմատական, այնպես էլ միջազգային չափանիշներին և սկզբունքներին համապատասխանության տեսանկյուններից, ինչն օգտակար կլինի թե ընտրական վարչակազմի, թե ընտրական կրթության համար: Հիմնական խնդիրները, որոնց փորձում է անդրադառնալ այս ծրագիրը, ընտրական վարչակազմի թույլ կարողություններն են իրենց աշխատանքն արդյունավետ իրականացնելու համար, և ընտրական կրթություն կազմակերպելու գիտակցության և ունակության պակասը:

Ընտրական վարչարարության և ընտրական կրթության խրախուսման անհրաժեշտությունը բացահայտվել է ինչպես ազգային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով, այնպես էլ International IDEA-ի ազգային և տարածաշրջանային փորձագետների ու գործիչների ցանցի կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Դա ներառում է Հայաստանում 2003թ-ի ընտրությունների և 2004-2005թթ. ժողովրդավարական բարեփոխումների գնահատումները (Վրաստանում և Ադրբեջանում զուգահեռ տարված աշխատանքի հետ միասին)՝ նախաձեռնված International IDEA-ի կողմից և իրականացված տեղական փորձագետների և մասնագետների կողմից: Այս գնահատումները հաստատվեցին ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և Եվրոպայի Խորհրդի դիտորդական հաշվետվությունների արդյունքներով: Բոլոր այս գնահատումները բացահայտեցին, որ Հայաստանում ընտրությունների անցկացման հիմնական խնդիրներից է ընտրական վարչակազմի և ընտրական գործընթացների մասին գիտելիքի և որակավորման պակասը, և բացի այդ ժողովրդի օտարումը բարեփոխման գործընթացներից և քաղաքացիական մշակույթի ու կազմակերպվածության ցածր մակարդակը: Նաև անհրաժեշտ է, որ ընտրական վարչակազմը ավելի լավ տիրապետի ընտրական վարչարարության անկախության սկզբունքներին և

պրակտիկային, ինչպես նաև ընտրական գործընթացի տարբեր մասնակիցների հետ աշխատանքին:

Այսպիսով ձևակերպվել է ժողովրդավարական ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացման ռազմավարության, ինչպես նաև այնպիսի գործիքների (ուսումնական նյութերի) անհրաժեշտություն, որոնք կօգնեն ուսումնասիրել ընտրություններն ավելի լայն համեմատական համատեքստում, և միջազգային չափանիշներին ու սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից: BRIDGE-ն այն գործիքներից է, որ կարող է ծառայել այդ նպատակին: Ծրագրի նպատակն է փոխանցել է BRIDGE-ի մոտեցումը և հմտությունները ընտրական գործընթացում ներգրավված մարդկանց (մասնավորապես ընտրական վարչակազմին), հիմնականում ընտրական հանձնաժողովների շրջանակում:

International IDEA-ն խորհրդակցել է տեղի ընտրական հանձնաժողովների մասնավերապես ԿԸՀ-ի հետ, տեղական և միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ ինչպիսիք են ՄԱԿ Զարգացման ծրագիրը, ԵԱՀԿ-ը, Եվրապայի Խորհուրդը, Եվրոպական հանձնաժողովը, տեղական ՀԿ-ները և IDEA անդամ պետությունները այն բանի վերաբերյալ, թե ինչ կարիքներ գոյություն ունեն և ինչպես լավագույնս լուծել դրանք: 2005թ-ին International IDEA-ն Երևանում մասնակցեց Նիդեռլանդների զարգացման և համագործակցության նախարարի և պաշտոնական պատվիրակության հետ հանդիպմանը, որի ժամանակ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ընդգծեցին, որ Հայաստանի զարգացման հիմնական բացերից են կայուն ընտրական կրթությունը, ընտրական վարչակազմի մասնագիտական և էթիկական պատրաստվածությունը և ժողովրդի իրական քաղաքական մասնակցությունը հանրային օրակարգի ձևակերպմանը և հանրային քաղաքականությունների մշակմանը: Այս խորհրդակցությունները բացահայտեցին ընտրական հանձնաժողովների հմտությունների և մասնագիտական զարգացման խնդիրներին անդրադառնալու անհրաժեշտությունը երկարաժամկետ հիմունքներով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընտրական կրթությանը և ուսուցումների/կրթության անցկացմանը տեղացիների և տեղական կազմակերպությունների ուժերով, այլ ոչ օտարերկրյա կազմակերպությունների միջոցով: Բացի այդ, վերջին չորս տարիների ընթացքում International IDEA-ի կողմից նախաձեռնած երկխոսության գործընթացները քաղաքական բարեփոխումների ոլորտում ցույց տվեցին հասարակության իրազեկման, հանրային կյանքին ու որոշումների կայացման գործընթացներին ժողովրդի մասնակցության անհրաժեշտությունը և ազդեցությունը: Այսպիսով, ծրագրի ներկա փուլում փորձ կարվի զարգացնել ընտրական վարչակազմի մասնագիտական և էթիկական հմտությունները, մշակել ընտրական հանձնաժողովների մասնագիտական զարգացման և ընտրական կրթության ռազմավարություն և մեթոդաբանություն, և 2007 և 2008 թթ. ընտրություններին ընդառաջ՝ երկխոսության միջոցով, աջակցել հասարակության մասնակցությանը:

4. Նկարագիր

4.1 Նպատակ

Այս ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանում ընտրական վարչարարության ինստիտուտի ամրապնդմանը, զարգացնել ընտրական վարչակազմի մասնագիտական և էթիկական ունակությունները, Հայաստանում մշակել կայուն ընտրական կրթություն և խրախուսել ընտրություններին հասարակության մասնակցությունը՝ 2007 և 2008 թթ. ընտրությունների ընդառաջ:

4.2 Ակնկալվող արդյունքները

Այս ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները.

- Հարավային Կովկասում BRIDGE կորիզ խմբի հիման վրա Հայաստանում ազգային ուժեղ խմբի ստեղծում՝ ընտրությունների օրինականությանը, օրենքի կիրառմանը և ընտրություններին մասնակցությանը վերաբերող խնդիրներին լուծում տալու և այդ խնդիրները հաղթահարելու համար;
- Աջակցություն Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ) ընտրական վարչակազմի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն ունենալու գործում;
- Հայաստանի ընտրական հանձնաժողովների պլանավորման և տնօրինման հմտությունների կատարելագործում, ընտրական վարչակազմի ուժեղացում՝ երկարաժամկետ հիմունքներով;
- Ընտրական վարչակազմի ունակությունների և գիտելիքի բարելավում, որպեսզի վերջիններս առավելագույնս լավ պատրաստված լինեն Հայաստանում ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու համար;
- Հայաստանի ընտրական հանձնաժողովների մասնագիտական զարգացումը վերածել շարունակական գործընթացի, որն ապահովված կլինի պետության կողմից;
- Հայաստանում BRIDGE-ի հիման վրա ընտրական կրթության ծրագրի պատրաստում և փորձարկում;
- Ընտրական կրթության ծրագրերի ներմուծում տեղական կրթական կառույցներում, ինչը կապահովի Հայաստանում այս գործընթացների կայունությունը;
- Հայաստանում որակավորված ուսուցանողների թվի ավելացում;
- Հայաստանի հասարակությունում ընտրական գործընթացների և ընտրություններին հասարակության մասնակցության մեխանիզմների խրախուսում;
- Ընտրությունների բնագավառում աշխատող տեղական և միջազգային կազմակերպությունների գործողությունների համակարգման բարելավում:

4.3 Աշխատանքներ և գործողություններ

Ակնկալվող արդյունքներին հասնելու միջոցներն են.

- Հայաստանում BRIDGE-ի ազգային կորիզ խմբի ստեղծում, որը կառաջարկի ընտրական վարչակազմի զարգացման ռազմավարություն, կպատրաստի նյութեր, կանցկացնի ուսուցումներ;
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հետ փոխըմբռման համաձայնագրի/հուշագրի մշակում և ստորագրում;
- Ընտրական վարչարարության մասնագիտական զարգացման ռազմավարության մշակում՝ Հայաստանի ԿԸՀ-ի հետ սերտ համագործակցությամբ;
- Ընտրական հանձնաժողովների ուսուցման համար նյութերի մշակում, որը կլինի BRIDGE-ի նյութերի տեղայնացված տարբերակը (500-550 էջ);
- Հայաստանում ուսուցանողների երկարաժամկետ ուսուցման (12 օր) անցկացում, և ԿԸՀ ծրագրամեթոդական բաժնի (ուսուցման բաժին) հզորացման համար աջակցության ցուցաբերում;
- BRIDGE-ի նյութերի վրա հիմնված ընտրական կրթության ծրագրի մշակում (50-70 էջ);

- 10 օրյա ընտրական կրթության երկու դասընթացների անցկացում և դրանց ներկայացումը տեղական կառույցներին՝ կայունությունն ապահովելու համար;
- Երևանում և ՀՀ 4 մարզերում 5 հանրային քննարկումների և բանավեճերի, 4 հեռուստատեսային, 5 ռադիո հաղորդումների կազմակերպում և 10 հոդվածների/հարցազրույցների/հայտարարությունների տպագրում մամուլում ընտրական և ժողովրդավարական գործընթացների մեխանիզմների վերաբերյալ քննարկումը խրախուսելու համար:

4.4 Ակնկալվող արդյունքները

- Հայաստանում ընտրական բարեփոխումների ուղղությամբ աշխատող մասնագետների խմբի ստեղծում;
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնժողովի հետ սերտ համագործակցությամբ ընտրական վարչակազմի զարգացման ռազմավարության մշակում,
- Հայաստանում ընտրությունների ոլորտում (ընտրական հանձնաժողովներ, քաղաքացիական հասարակություն) կրթական/ուսուցողական նյութերի ստեղծում;
- Հայաստանի ընտրական վարչակազմի հմտությունների զարգացման BRIDGE դասագրքի մշակում;
- Հայաստանում ընտրական վարչակազմի հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում;
- Հայաստանի ընտրական վարչակազմի մասնագիտական հմտությունների ամրապնդում ընտրությունների կազմակերպման և անցկացման բնագավառում;
- Հայաստանում ընտրական վարչակազմի շարունակական մասնագիտական զարգացման ապահովում;
- BRIDGE-ի հիման վրա ընտրական կրթական ծրագրի մշակում;
- ընտրական կրթական ծրագրի ներկայացում և անցկացում Հայաստանի կրթական հաստատություններում;
- Լրատվական ծրագրերի պատրաստում;
- Ընտրական գործընթացների և ընտրություններին հասարակության մասնակցության վերաբերյալ երկոսության և հասարակական քննարկումների նախաձեռնում:

4.5 Թիրախ խմբեր

- Հայաստանի ԿԸՀ-ը, հատկապես ԿԸՀ-ի աշխատակազմը և ծրագրամեթոդական բաժինը (ուսուցման բաժին);
- ՀՀ ԿԸՀ-ի աշխատակազմի առանձին անդամներ, որոնք կգործեն որպես ծրագրի ներկայացուցիչներ/ուսուցանողներ;
- Ընտրական կրթության բնագավառում աշխատող ուսուցանողներ, որոնք կլինեն ծրագրի կորիզ խմբի անդամներ և ուսուցանողներ;
- Ընտրական կրթությամբ հետաքրքրված երիտասարդ կանայք և տղամարդիկ, որոնք կմասնակցեն ընտրական կրթության դասընթացներին;
- Հայաստանի տեղական կրթական հաստատություններ (ակադեմիական կամ քաղաքացիական), որոնք կարող են տրամադրել ընտրական կրթության դասընթացներ;

- Հասարակության տարբեր խմբեր (հատկապես կանայք և երիտասարդներ), մարզերի ներկայացուցիչներ, որոնք կմասնակցեն բարեփոխումներին և/կամ ընտրական կրթության դասընթացներին:

4.6 Շահառուներ

- ՀՀ ԿԸՀ-ը, որն ուղղակիորեն աջակցություն կստանա ընտրական վարչակազմի և ընտրողների խմբերի ուսուցման համար կայուն, մասնագիտական մոտեցման գործում՝ անհրաժեշտ նյութերի և դասագրքերի տեսքով;
- ՀՀ ԿԸՀ-ի աշխատակազմը, որն ուղղկիորեն կշահի՝ ձեռքբերելով ընտրական գիտելիքներ, ունակություններ և հմտություններ ուսուցումներ անցկացնելու համար;
- Ընտրական կրթության բնագավառում աշխատող ուսուցանողները, որոնք ուղղակիորեն կշահեն՝ բարելավելով ընտրական գիտելիքները և ուսուցման ունակությունները՝ սովորելով նոր մեթոդաբանություն;
- Ընտրական կրթությամբ հետաքրքրված երիտասարդ կանայք և տղամարդիկ, որոնք ուղղկիորեն կշահեն՝ ձեռք բերելով ընտրական գիտելիքներ ու ունակություններ և կդառնան ընտրական գործընթացների ակտիվ մասնակից;
- Հայաստանի տեղական կրթական հաստատությունները (ակադեմիական կամ քաղաքացիական), որոնք կշահեն՝ ունենալով նոր ընտրական դասընթացներ, մեթոդաբանություն և ուսուցանողներ;
- Հասարակության տարբեր խմբեր (հատկապես կանայք և երիտասարդներ), մարզերի ներկայացուցիչներ, որոնք կշահեն՝ ներգրավվելով ընտրական գործընթացների և ընտրություններին մասնակցության խնդիրների վերաբերյալ բանավեճերին;
- Հասարակության լայն շերտերը, որոնք կշահեն անուղղակիորեն՝ ունենալով արհեստավարժ ընտրական հանձնաժողովներ, ինչպես նաև կշահեն կայուն ընտրական կրթության միջոցով, և ընտրական գործընթացների և ժողովրդավարական բարեփոխումների հետ կապված խնդիրների վերաբերյալ իմացության բարձրացման և դրանցում ներգրավվածության միջոցով:

5. Ակնկալվող ազդեցությունը

5.1 Ինստիտուցիոնալ հզորացում

Ունակությունների զորացումն այս ծրագրի առաջնային խնդիրն է: Դա կիրականացվի գիտելիքների, հմտությունների փոխանցման և նյութերի, հատկապես ընտրական վարչակազմի համար ուսուցման նյութերի, մատչելիության միջոցով: Հմտությունների զորացումը կիրականացվի երեք մակարդակում՝ անհատ մասնակիցներ, ներպետական կազմակերպություններ ու հաստատություններ և հասարակության խմբեր (բազմապատկման էֆեկտ):

Ունակությունների զորացումն ազդեցություն կունենա անհատական մակարդակում, քանի որ ընտրական վարչակազմի մասնագիտական զարգացման և ընտրական կրթության դասընթացների մասնակիցները կսովորեն անցկացնել BRIDGE-ի ուսումնական դասընթացներ և իրականացնել ընտրական կրթություն: Ինստիտուցիոնալ մակարդակում ազգային մարմինը, հիմնականում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ՀՀ ԿԸՀ), կշահի իր աշխատակազմի աշխատողների և ընտրական հանձնաժողովների անդամների հմտությունների

հզորացման միջոցով, որոնք կորակավորվեն որպես BRIDGE-ի ուսուցանողներ և որոնց մատչելի կլինեն BRIDGE-ի ուսումնական ծրագրի նյութերը: Բացի դրանից, կրթական հաստատությունները (ակադեմիական կամ քաղաքացիական) կշահեն՝ ունենալով կայուն ընտրական կրթության դասընթաց:

Ծրագրի շրջանակում իրականացվող ուսուցումների միջոցով կտրամադրվեն լրացուցիչ գիտելիքներ, ինչպես նաև կբարելավվեն Հայաստանում ապագա ընտրությունների նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար ընտրական վարչակազմի ունակությունները:

Հասարակության խմբերը կշահեն ընտրական գործընթացներին և ընտրությունների մասնակցության խնդիրների և մեխանիզմների վերաբերյալ երկխոսության, բանավեճերին մասնակցության և իրազեկության բարձրացման ծրագրերի միջոցով:

5.2 Գենդերայի տեսանկյուն

BRIDGE ծրագիրը որդեգրել է գենդերային հավասարության սկզբունքը: Դա իրականացվում է հետևյալ կերպ.

- BRIDGE-ի բոլոր նյութերը մշակվել են գենդերային հավասարության սկզբունքին համապատասխան;
- BRIDGE-ի ուսուցանողների խմբերը գենդերային տեսանկյունից հավասարակշռված են;
- Մասնակիցների ընտրության ժամանակ գենդերային հավասարությունը ընտրության կարևոր չափանիշներից մեկն է:

Դասընթացի առաջնային նպատակներից է մասնակիցների վստահության բարձրացումը: Դա հատկապես կարևոր է կին մասնակիցների մասնագիտական զարգացման համար:

5.3 Աշխարհագրական ներկայացուցչություն

Բոլոր դասընթացները, ինչպես նաև հանրային բանավեճերը/քննարկումները կապահովեն մարզերի բնակչության մասնակցությունը:

6. Ծրագրի գործընկերները

Ծրագրի իրականացման ընթացքում ծրագրային թիմը կհամագործակցի.

- ՀՀ ԿԸՀ-ի հետ;
- Կրթական հաստատությունների հետ (Պետական կառավարման ակադեմիա);
- Տեղական ինքնակառավարման մարմինների հետ;
- Զանգվածային լրատվության միջոցների հետ;
- Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ;
- Միջազգային կազմակերպությունների և IDEA-ի անդամ պետությունների հետ:

7. Բյուջե

Ծրագրի ամբողջ բյուջեն (25 ամիս) 385.414 եվրո է, այդ թվում 153.331 եվրո 2006թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների համար, 224.379 եվրո 2007թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների համար և 7704 եվրո 2008թ-ի հունվար ամսվա համար: